



ՍԵՆՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ԱՆՁԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ
ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԴԱՍ 1



ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

«Չեռաուսուցման դասընթացների մշակում Արդարադատության ակադեմիայի համար» ծրագիրը ֆինանսավորվել է ԱՄՆ Պետքարտուղարության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի կողմից և իրականացվել է «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության կողմից՝ Արդարադատության ակադեմիայի հետ գործընկերությամբ: Սույն նյութում արտացոլված են հեղինակների տեսակետները, մեկնաբանությունները և եզրակացությունները, որոնք կարող են չհամընկնել ԱՄՆ Պետքարտուղարության տեսակետների հետ:



ՆԱԽԱԲԱՆ



ԴԱՍԸՆԹԱՅԻ ՆՅՈՒԹԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ
ԲԱՂԱԴՐԻՉԻ ՀԱՄԱՐ ՆՇՎԱԾ ԵՆ
ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԵՎ
ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ: ՀԵՏԵՎԵՔ
ԴՐԱՆՑ:

Նախաբանի արդյունավետ յուրացման համար պետք է
Նախատեսել մոտ 15 րոպե ժամանակ:

Սույն դասընթացը նախատեսված է դատավորների, ինչպես նաև արդարադատության համակարգի այլ աշխատողների համար: Այն Ձեզ հնարավորություն կտա ծանոթանալու սեռով պայմանավորված, ընտանիքում՝ բռնության և անչափահասների հանցավորության դեմ պայքարի քրեաիրավական և քրեադատավարական հիմնախնդիրներին, հատուկ ուշադրություն դարձնելով սեռով պայմանավորված կամ ընտանիքում բռնության ենթարկված անձանց և անչափահասների իրավունքներին, նրանց հետ աշխատանքի հիմնական հասկացություններին, սկզբունքներին և հիմնադրույթներին:

Դասընթացը բովանդակում է վերոնշյալ հարցերի լուսաբանմանը նվիրված թեմաներ՝ սեռով պայմանավորված, ընտանիքում բռնության և անչափահասների հանցավորության դեմ պայքարի համատեքստում խաչաձև ներկայացնելով անչափահասների, ընտանիքում բռնության, սեռով պայմանավորված բռնության հիմնախնդիրները: Մանրամասն լուսաբանվում են նաև անչափահասների քրեական պատասխանատվության և պատժի առանձնահատկությունները:

Սույն դասընթացի շրջանակում Ձեզ ներկայացված նյութն ուսումնասիրելու ընթացքում Ձեզ կառաջադրվեն հրահանգներ, որոնց ուշադիր հետևելը և պատշաճ կերպով արձագանքելը Ձեզ կօգնի լիարժեքորեն յուրացնել նոր գիտելիքները և առավել կամրապնդի նոր ստացած տեղեկատվության առանցքային հասկացություններն ու դրանց էությունը: Այնուհետև, ինչպես յուրաքանչյուր դասից հետո, այնպես էլ ամբողջ դասընթացի ավարտից հետո պատասխանելով ինքնաստուգիչ հարցերին՝ Դուք.

- Կունենաք ամբողջական գիտելիք սեռով պայմանավորված, ընտանիքում բռնության և անչափահասների հանցավորության դեմ պայքարի քրեաիրավական հիմնախնդիրները:

1. Քանի որ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքում կիրառվում է «ընտանիքում բռնություն», իսկ Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին ԵԽ կոնվենցիայում՝ «ընտանեկան բռնություն» եզրույթները, այսուհետ «ընտանիքում բռնություն» ու «ընտանեկան բռնություն» կապակցություններն օգտագործվելու են որպես հոմանիշներ՝ տարբերակված ներկայացնելով միջազգային կամ ազգային օրենսդրությունը:

րավական և քրեադատավարական հիմնախնդիրների, անչափահասների նկատմամբ կիրառվող պատժի համակարգի առնչությամբ:

- Կկարողանաք կիրառել անչափահասների նկատմամբ պատիժ նշանակելու առանձնահատկությունները, լիարժեքորեն կպատկերացնեք անչափահասներին պատժից ազատելու քրեաիրավական և քրեադատավարական մեխանիզմները:
- Կկարողանաք հստակ տարբերակել անչափահասների հանդեպ կատարվող սեքսուալ ոտնձգությունները և ընտանիքում բռնության դրսևորումները:
- Կծանոթանաք անչափահասի կարգավիճակի որոշման ընթացակարգերին և ընթացակարգային երաշխիքներին: Կոնկրետ դեպքերի վերլուծությունների միջոցով կկարողանաք մասնագիտական եզրահանգումներ անել և տեսակետներ առաջադրել նշված գործընթացի շրջանակում առավել հաճախ ծագող ապացուցման խնդիրներին:
- Կծանոթանաք կարծրատիպերի ազդեցությանը քրեական դատավարությունում, ինչպես նաև սեռով պայմանավորված և ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ քրեական գործերի քննության վարույթում: Կոնկրետ իրավիճակների քննարկման միջոցով կկարողանաք սեփական եզրահանգումներն անել սեռով պայմանավորված և ընտանիքում բռնության գոհերի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, բռնության դեմ արդյունավետ պայքարի դատավարական մեխանիզմների վերաբերյալ:
- Կկարողանաք տարբերակել «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքով սահմանված պաշտպանության միջոցները և ընտանիքում բռնության վերաբերյալ գործերի քննության քրեադատավարական գործիքակազմը:
- Կկարողանաք կիրառել անչափահասին մեղսագրվող հանցանքի վերաբերյալ վարույթի դատավարական առանձնահատկությունները և անչափահասի իրավաչափ շահերի ապահովման դատավարական երաշխիքները երեխայի լավագույն շահի համատեքստում.

- Կկարողանաք ամբողջությամբ կիրառել դասընթացի նյութում ամփոփված հիմնարար գիտելիքները, դրսևորել երեխայի լավագույն շահ ապահովող գործելաոճ և առաջադրել մասնագիտական նոր հիմնախնդիրներ: Սույն դասընթացի թեմաների յուրացման համար անհրաժեշտ են գիտելիքներ ԲՈՒՀ-երի իրավաբանական ֆակուլտետների մասնագիտական առարկաներից, այդ թվում՝ բազային գիտելիքներ քրեական և քրեական դատավարության իրավունքներից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության արդյունավետ յուրացման համար պետք է
նախատեսել մոտ 15 րոպե ժամանակ:



Վերջին տարիներին աշխարհում նկատվում է սեռով պայմանավորված, ընտանիքում բռնության և անչափահասների հանցավորության դեմ պայքարի ուժգնացում՝ համապատասխանաբար թե՛ քրեաիրավական, թե՛ քրեադատավարական ներգործության մեթոդներով:

Հայաստանի Հանրապետությունն անմասն չէ միջազգային զարգացման միտումներից և վավերացրել կամ ստորագրել է հիմնական այն փաստաթղթերը, որոնք վերաբերում են սեռով պայմանավորված, ընտանիքում բռնության և անչափահասների հանցավորության դեմ պայքարին՝ զուգահեռաբար փոփոխություններ իրականացնելով ազգային օրենսդրությունում: Դրա վառ ապացույցն են 2021թ.-ին ընդունված ՀՀ քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերը, որոնցում ցայտուն կերպով արտացոլված է սեռով պայմանավորված կամ ընտանիքում բռնության ենթարկված անձանց, ինչպես նաև անչափահասների իրավունքների պաշտպանության համատեքստում կուտակված առաջանցիկ միջազգային պրակտիկան:

Վերոնշյալ անձանց իրավունքների խախտումները պայմանավորված են ոչ միայն այդ անձանց խոցելիությամբ և գործնականում հանդիպող երկրորդային զոհականացմամբ, այլ նաև օրենսդրական բացերով:

Դասընթացն ունի 10 փոխկապակցված դասերից կազմված թեմատիկ տրամաբանական կառուցվածք: Ներածական բնույթ ունեցող 1-ին և 2-րդ դասերից հետո՝ 3-5-րդ դասերի շրջանակներում Ձեր ուշադրությանը հաջորդաբար կներկայացվեն անչափահասների քրեական պատասխանատվության առանձնահատկություններին վերաբերող տարբեր հարցեր, իսկ 6-8-րդ դասերն արդեն կվերաբերեն տուժած անձանց այլ կատեգորիաների քրեական պատասխանատվության առանձնահատկություններին վերաբերող հարցերի: Թեմաների զարգացումը վերարտադրում է հարցերի այն հերթականությունը, որը, որպես կանոն, նկատվում է սեռով պայմանավորված կամ ընտանիքում բռնության ենթարկված անձանց և անչափահասների իրավական պաշտպանության տրամադրման ընթացքում: Միաժամանակ, այս կառուցվածքն ապահովում է սեռով պայմանավորված կամ ընտանիքում բռնության ենթարկված անձանց և անչափահասների պաշտպանության հիմքերի, ընթացակարգերի և երաշխիքների խմբավորված քննարկում:

Առաջին դասում ներկայացվում է անչափահասների նկատմամբ կիրառվող պատժի համակարգը: Երկրորդ դասը ներկայացնում է անչափահասների նկատմամբ պատիժ նշանակելը: Երրորդ և չորրորդ դասերը համապատասխանաբար ներկայացնում են անչափահասներին պատժից ազատելու առանձնահատկությունները և քրեական պատասխանատվության ենթարկելու առանձնահատկությունները:

Հաշվի առնելով, որ անչափահասների հանդեպ կատարվող սեքսուալ ոտնձգությունները և ընտանիքում բռնության դրսևորումներն ունեն էական առանձնահատկություններ, դրանք ներկայացվել են հինգերորդ դասում:

Վեցերորդ դասը հատուկ ուշադրություն է դարձնում կարծրատիպերի ազդեցությանը քրեական դատավարությունում և սեռով պայմանավորված և ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ քրեական գործերի քննության վարույթում՝ դրանով սահուն անցում կատարելով յոթերորդ դասին, որը համապատասխանաբար ներկայացնում է սեռով պայմանավորված և ընտանիքում բռնության զոհերի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, բռնության դեմ արդյունավետ պայքարի դատավարական մեխանիզմները:

Հաշվի առնելով ազգային օրենսդրության առանձնահատկությունները՝ ութերորդ դասը նվիրված է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքով սահմանված պաշտպանության միջոցների հարաբերակցությանն ընտանիքում բռնության վերաբերյալ գործերի քննության քրեադատավարական գործիքակազմի հետ: Ընդ որում, այդ դասում հատուկ ուշադրություն է դարձվում անչափահասին մեղսագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով այլընտրանքային դատավարական մեխանիզմներին:

Իններորդ դասը վերաբերում է անչափահասին մեղսագրվող հանցանքի վերաբերյալ վարույթի դատավարական առանձնահատկություններին՝ երեխայի լավագույն շահի ապահովման համատեքստում, իսկ ամփոփվում է սույն դասընթացը տասերորդ դասով, որում համապարփակ կերպով ներկայացվում են անչափահասի իրավաչափ շահերի ապահովման դատավարական երաշխիքները:

ԴԱՍ 1

ԱՆՉԱՓԱՅԱՍՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ԴԱՏԺԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ




ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ


Այս դասը կազմված է հետևյալ 4 բաղադրիչներից.
մոտիվացնող ներածական տեսանյութ,
դասի տեսական նյութ,
բառարան և
ինքնաստուգիչ հարցեր:
Բոլոր բաղադրիչների յուրացման համար
Ձեզ հարկավոր է 4 ժամ:

Ինքնաստուգիչ հարցերը և բացատրություններով
ուղեկցվող դրանց պատասխանները ներառված չեն
այս ձեռնարկում:

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ



Տեսանյութն ուշադրությամբ
ուսումնասիրելու համար անհրաժեշտ է
մոտ 5 րոպե:



Ուշադրությամբ
կարդացեք դասի
տեսական մասը՝
օգտվելով բառարանից,
և այն յուրացնելուց հետո
միայն պատասխանեք
ինքնաստուգիչ
հարցերին:
Այս աշխատանքների
համար անհրաժեշտ է
մոտ 175 րոպե:

Ե

րեխայի իրավունքների մասին կոնվենցիայի (1) 37-րդ հոդվածը սահմանում է հանցավոր վարքագիծ դրսևորած երեխայի նկատմամբ պատժի նշանակման ընդհանուր մոտեցումները, որոնք առավել հստակ կանոնակարգում են ստացել Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու համար ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններում (Պեկինյան կանոններ) (2):

Ներկայացված փաստաթղթերի հիմքում դրված փիլիսոփայությունից հետևում է, որ անչափահասների կողմից կատարված հանցագործություններին արձագանքելիս պետությունը պետք է առավել մեղմ մոտեցում դրսևորի՝ հաշվի առնելով երեխայի հոգեբանական առանձնահատկությունները և երեխայի լավագույն շահը: Պեկինյան կանոնների 17-րդ կետի բ ենթակետի մեկնաբանությունից հետևում է, որ երեխաների նկատմամբ զուտ պատժիչ բնույթի մոտեցումն անընդունելի է:

Բազմաթիվ հոգեբանական հետազոտություններ (3-6) վկայում են, որ, ի տարբերություն չա-

փահասների, հանցավոր վարքագիծ դրսևորած անչափահասների կողմից իրենց վարքագծի հետևանքները լիարժեքորեն ընկալելու, արտաքին ազդեցությանը դիմագրավելու, ինչպես նաև ինքնուրույն որոշում կայացնելու ունակությունները սահմանափակ են: Բացի դրանից, անչափահասներն առավել զգայուն են կիրառվող պատժատեսակների բովանդակությունը կազմող սահմանափակումների ու զրկանքների նկատմամբ:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի (7) 86-րդ հոդվածը սահմանում է այն պատժատեսակները, որոնք կարող են նշանակվել անչափահասների նկատմամբ.

- 1 տուգանք,
- 2 հանրային աշխատանքներ,
- 3 կալանք,
- 4 որոշակի ժամկետով ազատազրկում:

2021թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգրքով (8) սահմանվել է անչափահասների նկատմամբ կիրառման ենթակա պատժի համակարգը՝

- 1 տուգանք,
- 2 հանրային աշխատանքներ,
- 3 որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկել,
- 4 ազատության սահմանափակում,
- 5 կարճաժամկետ ազատազրկում,
- 6 ազատազրկում:

Անչափահասների նկատմամբ կիրառվող տուգանքը դրամական տուժանք է, որը կիրառվում է անչափահասի ինքնուրույն վաստակի կամ այնպիսի գույքի առկայության դեպքում, որի վրա կարող է տարածվել բռնագանձում: Գործող քրեական օրենսգրքի համաձայն՝ տուգանքը կարող է կիրառ-



Սրանք կարևոր օրենսդրական փոփոխություններ են անչափահասների նկատմամբ կիրառման ենթակա պատժի համակարգի վերաբերյալ, ուստի մտապահեք նշված պատժատեսակները:

վել միայն որպես հիմնական պատիժ՝ ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում կամ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելիս, մինչդեռ նոր քրեական օրենսգրքով տուգանքը կարող է կիրառվել թե՛ որպես հիմնական և թե՛ որպես լրացուցիչ պատիժ:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի համաձայն՝ *տուգանքն* անչափահասի նկատմամբ նշանակվում է պատիժ նշանակելու պահին ՀՀ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից հինգհարյուրապատիկի չափով:

Ուշադրություն դարձրեք
ՀՀ գործող և նոր
քրեական օրենսգրքերում
տուգանքի համար
սահմանված չափերին՝
անչափահասի
նկատմամբ այն որպես
պատիժ կիրառելու
դեպքերում:

ՀՀ նոր քրեական օրենսգրքում տուգանքը կարող է կիրառվել ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար որպես հիմնական պատիժ՝ հանցանք կատարած անձի եկամտի հնգապատիկից հիսնապատիկի չափով, իսկ որպես լրացուցիչ պատիժ՝ ծանր և առանձնապես ծանր՝ գույքային վնաս պատճառելու հետ կապված կամ շահադիտական դրդումներով կատարված հանցագործությունների համար՝ հանցանք կատարած անձի ամսական եկամտի կրկնապատիկից քսանապատիկի չափով: ՀՀ նոր քրեական օրենսգրքում չափահասների և անչափահասների պարագայում տուգանքի չափերը տարբերակված չեն, քանի որ բովանդակային փոփոխության է ենթարկվել տուգանքի հաշվարկման հիմքը. գործող օրենսդրությունը տուգանքի հաշվարկն իրականացնում է հիմնվելով պետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի, մինչդեռ նոր քրեական օրենսգրքը՝ անձի փաստացի եկամտի վրա: Բնական է՝ որքան ցածր լինեն անչափահասի եկամուտները, այնքան քիչ կլինի նաև տուգանքի չափը:

Տուգանքն անհապաղ և ամբողջությամբ վճարելու անհնարինության դեպքում դատարանն անչափահասի համար վճարման ժամկետ է սահմանում առավելագույնը մեկ տարի ժամկետով կամ թույլատրում է տուգանքը մաս առ մաս վճարել նույն ժամկետում: Նոր քրեական օրենսգիրքը հատուկ կանոնակարգում է նախատեսում այն իրավիճակների համար, երբ տուգանքը նշանակելուց հետո դատապարտյալի նյութական վիճակի վատթարացման հետևանքով նա զրկվում է տուգանքը վճարելու հնարավորությունից: Նման դեպքերում դատարանը, հաշվի առնելով դատապարտյալի դիրքորոշումը՝

- 1 երկարաձգում է տուգանքի վճարման սահմանված վերջնաժամկետը՝ առավելագույնը 1 տարով,
- 2 նշանակում է հանրային աշխատանքներ՝ հանրային աշխատանքների 24 ժամը հաշվարկելով հանցանքը կատարելու պահին նվազագույն աշխատավարձի չափով:

Հարկ է նշել, որ որ տուգանքը վճարելու անհնարինության դեպքում տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինելու հնարավորություն ՀՀ գործող քրեական օրենսգրքով ևս նախատեսված է՝ հանրային աշխատանքների երեք ժամը նվազագույն աշխատավարձի դիմաց, իսկ տուգանքի վճարումից չարամտորեն խուսափելու դեպքում՝ հինգ ժամը նվազագույն աշխատավարձի դիմաց:

Այս առումով, հետաքրքիր լուծում է առաջարկել ՀՀ նոր քրեական օրենսգիրքը, սահմանելով, որ՝ տուգանքը վճարելուց խուսափելու դեպքում բռնագանձվում է դատարանի որոշած տուգանքի չափին համարժեք գույք, եթե այդպիսին առկա է: Եթե այդպիսի գույք առկա չէ, ապա տուգանքը փոխարինվում է ազատագրկմամբ՝ ազատագրկման 3 օրը հաշվարկելով նվազագույն աշխատավարձի դիմաց:

Անչափահասի նկատմամբ կիրառման ենթակա հաջորդ պատժատեսակը **հանրային աշխատանք-**

Ուշադրություն դարձրեք տուգանքը վճարելուց խուսափելու դեպքում բռնագանձման ինստիտուտի ներդրմանը:

ներն են, որոնք այլընտրանք են ազատագրկմանը: ՀՀ գործող քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի համաձայն՝ հանրային աշխատանքները դատարանի կողմից նշանակված, իրավասու մարմնի կողմից որոշված վայրում չվարձատրվող, դատապարտյալի կողմից հանրության համար օգտակար աշխատանքների կատարումն է: Դրանք կարող են նշանակվել ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություններ կատարած, առավելագույնը երկու տարի ժամկետով ազատագրկման դատապարտված անձանց նկատմամբ՝ երկու հարյուր յոթանասունից երկու հազար երկու հարյուր ժամ ժամկետով:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի 4-րդ մասում ներկայացված են այն անձինք, ում նկատմամբ հանրային աշխատանքներ նշանակվել չեն կարող, և այդ անձանց շրջանակում նշվում են նաև դատավճիռ կայացնելու պահին տասնվեց տարին չլրացած երեխաները: Ներկայացված ձևակերպումից հետևում է, որ ՀՀ գործող քրեական օրենսդրությամբ հանրային աշխատանքներ կարող են կիրառվել ոչ բոլոր անչափահասների նկատմամբ, այլ միայն նրանց, ում տասնվեց տարին լրացել է դատավճիռ կայացնելու պահին: Նոր քրեական օրենսգիրքը թույլ է տալիս հանրային աշխատանքների կիրառումը նաև տասնհինգ տարին լրացած անձանց պարագայում:

Ծանոթացեք
ազատագրկումը
հանրային
աշխատանքով
փոխարինելու
առանձնահատկության
հետ:

Հանրային աշխատանքների կիրառման պարտադիր պահանջ է այն, որ անչափահասը գրավոր դիմում ներկայացնի իր նկատմամբ ազատագրկման փոխարեն հանրային աշխատանքներ կիրառելու մասին: Վերջին ձևակերպումը խնդրահարույց է այն առումով, որ անչափահասները գործնականում նախընտրում են նման դիմում չներկայացնել՝ քաջ գիտակցելով, որ իրենց կատարած ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքի պարագայում դատարանը նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառելու, իսկ այդ ինստիտուտով նախատեսված սահմանափակումների շրջանակն անհամեմատ զիջում է հանրային աշխատանքների կիրառմամբ իր վրա դրվող սահմանափակումներին:

ՀՀ գործող քրեական օրենսգիրքը հանրային աշխատանքների տևողության առումով տարբերակում չի դրել չափահասների և անչափահասների միջև. երկուսի պարագայում էլ նախատեսվում է նույն ժամաքանակը՝ երկու հարյուր յոթանասունից երկու հազար երկու հարյուր ժամ: Հանրային աշխատանքների նման տևողությունն արդարացված չէ, և այդ առումով ավելի առաջադիմական մոտեցում է ամրագրվել ՀՀ նոր քրեական օրենսգրքում, որտեղ սահմանվում է 60-ից 270 ժամ տևողությամբ հանրային աշխատանք: Սակայն ՀՀ նոր քրեական օրենսգրքում ևս այս տևողությունը նախատեսված է թե՛ չափահաս, թե՛ անչափահաս դատապարտյալների համար:

Որպես ուղեցույց ընդունելով Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի 1989թ.-ի և Նվազագույն տարիքի մասին 1973թ.-ի կոնվենցիաները (9)՝ ՀՀ նոր քրեական օրենսգրքի 97-րդ հոդվածն ուղղակիորեն օրենսդրորեն ամրագրել է, որ անչափահասները չեն կարող ներգրավվել իրենց ֆիզիկական կամ հոգևոր զարգացման կամ առողջության համար վտանգ ներկայացնող աշխատանքներում:

Հանրային աշխատանքների տևողությունը դատավճիռ կայացնելու պահին 15 տարին լրացած անչափահասների համար չի կարող գերազանցել օրական 2 ժամը, իսկ 16-18 տարին չլրացած անչափահասների համար՝ օրական 3 ժամը:

ՀՀ գործող քրեական օրենսգրքով՝ անչափահասների նկատմամբ կիրառվող մյուս պատժատեսակները կապված են ազատությունից զրկելու հետ: Մասնավորապես, ՀՀ գործող քրեական օրենսգրքի 88-րդ հոդվածը սահմանում է, որ *կայանքը* տասնհինգ օրից երկու ամիս ժամկետով նշանակվում է դատավճիռը կայացնելու պահին տասնվեց տարին լրացած անչափահասի նկատմամբ և դրսևորվում ուղղիչ հիմնարկում անազատության մեջ դատապարտյալին պահելու ձևով՝ հասարակությունից խիստ մեկուսացման պայմաններում:

Ուշադրություն դարձրեք տուգանքը վճարելուց խուսափելու դեպքում բռնազանձման ինստիտուտի ներդրմանը:

ՀՀ գործող քրեակատարողական օրենսդրության կանոնակարգման պարագայում անչափահասների նկատմամբ կալանք պատժատեսակի կիրառումը հակասում է միջազգային մի շարք իրավական ակտերի պահանջներին: Ցավոք, ՀՀ գործող քրեակատարողական օրենսգիրքը չի նախատեսում կրթության ապահովումը կալանքի դատապարտված անչափահասների համար, մինչդեռ «Դատապարտյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների» (10) 77-րդ հոդվածը սահմանում է, որ դատապարտյալների համար պետք է ապահովվի կրթություն ստանալու հնարավորությունը: Դատապարտյալների, հատկապես երիտասարդ դատապարտյալների կրթության հնարավորության երաշխավորման պահանջը սահմանված է նաև Եվրոպական քրեակատարողական (պենիտենցիար) կանոնների 71.5 հոդված-ում (11):

Համանման դրույթ են պարունակում նաև անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները: Հիշյալ փաստաթղթի կետ 26.2-ի համաձայն՝ «Ուղղիչ հիմնարկներում անչափահասները պետք է ապահովվեն իրենց տարիքին, սեռին, անձին և լիարժեք զարգացման շահերին համապատասխան խնամքով, պաշտպանությամբ և սոցիալական, հոգեբանական, բժշկական, ֆիզիկական, կրթության և արհեստավարժության բնագավառների ողջ անհրաժեշտ օգնությամբ»:

Կալանք պատժատեսակի կանոնակարգման ժամանակ տեղ գտած ամենալուրջ հիմնախնդիրը կապված է այն հանցավոր արարքների շրջանակի հետ, որի համար այն կարող է կիրառվել: ՀՀ գործող քրեական օրենսգրքի 88-րդ հոդվածը սահմանում է, որ կալանք կարող է նշանակվել *ոչ մեծ և միջին ծանրության* հանցանքների համար ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում: Ի հակադրություն սրա, Պեկինյան կանոնների կետ 17.1-ի համաձայն՝ «...գ) անչափահաս իրավախախտին պետք չէ ազատազրկել, եթե միայն նա մեղավոր չի ճանաչվում այլ անձի դեմ բռնությամբ լուրջ արարք գործելու կամ բազմաթիվ լուրջ իրավախախտումներ կատարելու մեջ, ինչպես նաև ներգործության ուրիշ համապատասխան միջոցի բացակայության դեպքում»: Նույն կանոնների հոդված 19.1-ում սահմանվում է, որ անչափահասին որևէ ուղղիչ հիմնարկում ներփակելը միշտ պետք է ծայրահեղ միջոց լինի:

Պեկինյան կանոնների ներկայացված թարգմանությունը որոշակի շեղում ունի դրանց անգլերեն բնօրինակից, որտեղ խոսքը ոչ թե «բազմաթիվ լուրջ իրավախախտումներ կատարելու», այլ «լուրջ իրավախախտումներ բազմիցս կատարելու» մասին է, իսկ «ինչպես նաև»-ի փոխարեն օգտագործվում է «և» շաղկապը (12):

Փաստորեն, Պեկինյան կանոնների համաձայն՝ անչափահասի նկատմամբ կալանքի կիրառումը հնարավոր է երկու դեպքում՝

- այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով լուրջ արարք գործելու,
- լուրջ իրավախախտումներ բազմիցս կատարելու:

Ընդ որում՝ անչափահասը նշված երկու դեպքերում էլ ազատությունից կարող է զրկվել, եթե բացակայում է արձագանքման այլ համապատասխան միջոցը:

Համանման պահանջ է առկա նաև Քրեական արդարադատության համակարգում հայտնված երեխաների նկատմամբ գործողությունների ուղենիշերի (Վիեննայի ուղենիշեր) (13) 18-րդ կետում, որը սահմանում է, որ փակ հաստատություններում անչափահասներին պահելը պետք է լինի որպես ծայրահեղ միջոց, անչափահասին ազատությունից զրկելը պետք է լինի հնարավորինս նվազագույն ժամանակահատվածով. անչափահասի նկատմամբ պետք է դրսևորվի երեխայամետ արդարադատություն:

Թեև Պեկինյան կանոնները չեն հստակեցնում, թե ինչ պետք է հասկանալ «լուրջ արարք», «լուրջ իրավախախտում» հասկացությունների ներքո, հասկանալի է, որ ոչ մեծ ծանրության հանցագործություններն այդ հասկացությունների ներքո չեն ընդգրկվում: Հետևաբար, ոչ մեծ ծանրության հանցագործությունների պարագայում կալանք պատժատեսակի սահմանումը բովանդակային առումով շեղվում է Պեկինյան կանոններով սահմանված ուղենիշներից:

Մտապահեք
Պեկինյան կանոնների
թարգմանության
վրիպակը:

Այս առումով, առավել առաջադիմական մոտեցում է ամրագրված ՀՀ նոր քրեական օրենսգրքում, որի 98-րդ հոդվածը սահմանում է, որ կարճաժամկետ ազատազրկումն անչափահասի նկատմամբ նշանակվում է միայն այն դեպքում, երբ ավելի մեղմ պատժատեսակը չի կարող նպաստել պատժի նպատակների իրականացմանը: Ընդ որում՝ ոչ մեծ ծանրության հանցագործության համար, ինչպես նաև առաջին անգամ հանցանք կատարելու դեպքում, որը միջին ծանրության հանցանք է, անչափահասի նկատմամբ կարճաժամկետ ազատազրկում չի նշանակվում:

Ազատազրկումը որոշակի ժամկետով դատապարտյալին ուղղիչ հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով հասարակությունից մեկուսացնելն է: ՀՀ գործող քրեական օրենսգրքի համաձայն՝ այն անչափահասների նկատմամբ նշանակվում է՝

- 1** ոչ մեծ ծանրության հանցագործության համար՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, իսկ միջին ծանրության հանցագործության համար՝ առավելագույնը երեք տարի ժամկետով,
- 2** մինչև տասնվեց տարին լրանալը կատարած ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի համար՝ առավելագույնը յոթ տարի ժամկետով,
- 3** տասնվեցից մինչև տասնութ տարին լրանալը կատարած ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի համար՝ առավելագույնը տասը տարի ժամկետով:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածը սահմանում է, որ մինչև տասնվեց տարին լրանալը միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարած անձանց նկատմամբ ազատազրկումը, ըստ հանցագործությունների համակցության, չի կարող գերազանցել յոթ տարին: Տասնվեցից մինչև տասնութ տարին լրանալը միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարած անձանց նկատմամբ ազատազրկումը, ըստ հանցագործությունների համակցության, չի կարող գերազանցել տասը տարին: Ըստ դատավճիռների համակցության՝ ազատազրկման ձևով նշանակվող վերջնական պատիժը չի կարող գերազանցել տասներկու տարին:

Ինչպես տեսնում ենք, օրենսդիրը հնարավոր է համարում ազատազրկում պատժատեսակի կիրառումը ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անչափահաս

սի նկատմամբ, ինչը, կարծում ենք, ինչպես և կալանքի դեպքում, Պեկինյան կանոններից շեղում է: Ակնհայտ է, որ ազատագրվում պատժատեսակն անչափահասի հանդեպ կարող է կիրառվել որպես ծայրահեղ, բացառիկ միջոց:

ՀՀ նոր քրեական օրենսգրքի 99-րդ հոդվածն ուղղակիորեն ամրագրում է, որ անչափահասի նկատմամբ ազատագրվումը պատժի բացառիկ միջոց է, որը նշանակվում է միայն այն դեպքում, երբ ոչ մի այլ միջոց չի կարող ապահովել պատժի նպատակների իրականացումը:

Չիշեք, որ անչափահասի նկատմամբ ազատագրվում կիրառելը դիտարկվում է որպես վերջին միջոց:

Ոչ մեծ ծանրության հանցագործության համար, ինչպես նաև առաջին անգամ հանցանք կատարելու դեպքում, որը միջին ծանրության հանցանք է և զուգորդված չէ բռնությամբ, անչափահասի նկատմամբ ազատագրվում չի նշանակվում: Եթե Հատուկ մասի համապատասխան հոդվածով ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար, բացի ազատագրվումից, այլ պատիժ նախատեսված չէ, ապա դատարանը նշանակում է պատժի համակարգում առկա ազատությունից զրկելու հետ չկապված ավելի մեղմ պատժատեսակ, որը կիրառելի է անչափահասի նկատմամբ:

Միաժամանակ, ՀՀ նոր քրեական օրենսգրքի 95-րդ հոդվածը հատուկ կանոնակարգում է իրականացրել՝ սահմանելով, որ մինչև 16 տարին լրանալը հանցանք կատարած անչափահասի նկատմամբ նշանակվող պատժի նվազագույն և առավելագույն ժամկետը կամ չափը չի կարող գերազանցել Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով նախատեսված պատժի նվազագույն և առավելագույն ժամկետի կամ չափի մեկ երրորդը: 16-ից մինչև 18 տարին լրանալը հանցանք կատարած անչափահասի նկատմամբ նշանակվող պատժի նվազագույն և առավելագույն ժամկետը կամ չափը չի կարող գերազանցել Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով նախատեսված պատժի նվազագույն

և առավելագույն ժամկետի կամ չափի մեկ երկրորդը: Եթե նշված կանոնները կիրառելիս պատժի ժամկետը կամ չափը պակաս է ստացվում տվյալ պատժատեսակի համար նախատեսված նվազագույն ժամկետից կամ չափից, ապա նշանակվում է ստացված ժամկետով կամ չափով պատիժ:

**Ծանոթացեք
օրենսդրական
նորամուծություններին:**

ՀՀ նոր քրեական օրենսգրքում տեղ են գտել անչափահասների նկատմամբ կիրառելի երկու նոր պատժատեսակներ: Դրանցից է **որոշակի գործունեությանը զբաղվելու իրավունքից զրկելը**, ինչը ենթադրում է կատարված հանցանքի բնույթի հետ կապված որոշակի գործունեությանը զբաղվելու արգելք: Այն կարող է կիրառվել որպես հիմնական պատիժ՝ ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար՝ 2-7 տարի ժամկետով, իսկ որպես լրացուցիչ պատիժ՝ ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար՝ 1-3 տարի, իսկ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար՝ 1-5 տարի ժամկետով:

Նոր քրեական օրենսգրքով անչափահասների նկատմամբ կիրառելի հաջորդ պատժատեսակն ազատության սահմանափակումն է, որը սակայն կիրառելի կդառնա ոչ շուտ քան 2023թ.-ի հուլիսի 1-ը: ՀՀ նոր քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը սահմանում է, որ ազատության սահմանափակումը դատապարտյալին առանց ուսումնառությունից կամ աշխատանքից կտրելու տնային պայմաններում հսկողության տակ պահելն է:


Ազատության սահմանափակումը նշանակվում է ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար՝ 6 ամսից 3 տարի ժամկետով: Օրենսդիրը նույն ժամկետը սահմանել է թե՛ չափահասների և թե՛ անչափահասների համար: Դատարանը, ազատության սահմանափակում նշանակելով, արգելում է հանցանք կատարած անձին այցելել տարբեր ժամանցային կամ այլ հաստատություններ, կազմակերպել որոշակի միջոցառումներ, մասնակցել կամ այցելել որոշակի միջոցառում-

ների կամ առանց դատապարտյալի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի համաձայնության փոխել բնակության վայրը կամ որոշակի ժամերի բացակայել տնից: Դատարանը, ազատության սահմանափակում նշանակելով, դատապարտյալի նկատմամբ սահմանում է նշված արգելքներից մեկը կամ մի քանիսը: Դատարանի նշանակած արգելքները չեն կարող սահմանափակել դատապարտյալի հետ համատեղ բնակվող անձանց ազատության կամ այլ անձանց հետ հաղորդակցվելու իրավունքը:

Որոշակի ժամերի տնից բացակայելու արգելքը չի կարող պակաս լինել օրական 8 և չի կարող ավելի լինել օրական 12 ժամից:

Ազատության սահմանափակումից դատապարտյալի խուսափելու դեպքում այն փոխարինվում է ազատագրկմամբ՝ ազատության սահմանափակման 2 օրը հաշվարկելով ազատագրկման 1 օրվա դիմաց: Ազատության սահմանափակումն ազատագրկմամբ փոխարինելիս ազատագրկման ժամկետը չի կարող գերազանցել այն հոդվածի սանկցիայով տվյալ պատժատեսակի համար նախատեսված առավելագույն ժամկետը, որով նախատեսված հանցագործության համար անձը դատապարտվել է: Եթե հաշվարկի արդյունքով ազատագրկման ժամկետը պակաս է ստացվում այն հոդվածի սանկցիայով տվյալ պատժատեսակի համար նախատեսված նվազագույն ժամկետից, որով նախատեսված հանցագործության համար անձը դատապարտվել է, ապա պատիժը նշանակվում է հաշվարկի արդյունքով ստացված ժամկետի չափով: Եթե անձը դատապարտվել է քրեական օրենսգրքի Հատուկ մասի այնպիսի հոդվածով, որի սանկցիայով ազատագրկում նախատեսված չէ, ապա ազատագրկման ժամկետը չի կարող գերազանցել 1 տարին:

Չնայած անչափահասների նկատմամբ կիրառման ենթակա պատժի համակարգի բարելավմանը՝ պետությունը պետք է ձգտի հնարավորինս մեղմ, սակայն անչափահասի վրա ներազդելու, նոր հանցանքի կատարումը կանխելու, քրեական պատասխանատվության և պատժի անհատականացումը, հանցանք կատարած անձի նկատմամբ պետության համարժեք և համաչափ արձագանքն ապահովելու հնարավորություն ունեցող միջոցներով արձագանքել անչափահասների կողմից կատարվող հանցավոր արարքներին:



- 1 Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա (ընդունված 20.11.1989, ՀՀ-ն վավերացրել է 22.06.1993),
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=60503>
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)
- 2 Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու համար ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններ (Պեկինյան կանոններ) (ընդունված 29.11.1985),
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18505>
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)
- 3 Steinberg, Laurence; Scott, Elizabeth. Less Guilty by Reason of Adolescence: Developmental Immaturity, Diminished Responsibility, and the Juvenile Death Penalty. American Psychologist, Vol 58(12), Dec 2003, էջ 1009-1018,
<https://psycnet.apa.org/record/2003-10099-001>
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)
- 4 Andrew Von Hirsch. Proportionate Sentences for Juveniles. How Different than for Adults? Punishment & Society April 2001 vol. 3 no. 2, էջ 221-236, մեջբերումն ըստ՝ Маргарян А. Уголовно-правовые аспекты наказания несовершеннолетних в Республике Армения// Образование и право, Юридические науки, 2017, N10, էջեր 157-164,
<https://cyberleninka.ru/article/n/ugolovno-pravovye-aspekty-nakazaniya-nesovershennoletnih-v-respublike-armenii/viewer>
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)

- 5 Zimring Franklin, E. Grisso Thomas, Schwartz Robert. Penal proportionality for the young offender: Notes on immaturity, capacity, and diminished responsibility. Youth on trial: A developmental perspective on juvenile justice. Chicago, IL, US: University of Chicago Press, vi, 2000, էջ 271-289,
<https://psycnet.apa.org/record/2001-00330-009>
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)
- 6 Praveen Kambam and Christopher Thompson. The development of decision-making capacities in children and adolescents: Psychological and neurological perspectives and their implications for juvenile defendants. Behavioral Sciences & the Law, Special Issue: The Neuroscience and Psychology of Moral Decision Making and the Law Volume 27, Issue 2, March/April 2009, էջ 173–190,
<https://onlinelibrary.wiley.com/doi/epdf/10.1002/bsl.859>
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)
- 7 ՀՀ գործող քրեական օրենսգիրք (ընդունված 18.04.2003, ուժի մեջ է մտել 01.08.2003),
<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=154707>
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)
- 8 ՀՀ նոր քրեական օրենսգիրք (ընդունված 05.05.2021, ուժի մեջ է մտնելու 01.07.2022),
<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=153080>
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)
- 9 Նվազագույն տարիքի մասին կոնվենցիա (ընդունված 06.06.1973, ՀՀ-ն վավերացրել է 03.10.2005),
<http://www.hamk.am/docs/138.pdf>
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)
- 10 Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններ (Նելսոն Մանդելայի կանոններ) (ընդունված 30.08.1955),
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18499>
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)

- 11** Եվրոպական բանտային կանոններ, ընդունված Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեի կողմից 2006թ. հունվարի 11-ին,
<https://rm.coe.int/16806f5b92>
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)
- 12** Անչափահասի պաշտպանությունը քրեական գործերով վարույթի ընթացքում. Հեռուստուցման ձեռնարկ, դաս 5,
<https://www.justiceacademy.am/assets/attachments/DAS52017anchapahas.pdf>
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)
- 13** Քրեական արդարադատության համակարգում հայտնված երեխաների նկատմամբ գործողությունների ուղենիշեր (ընդունված 21.07.1997),
<https://juvenilejusticecentre.org/wp-content/uploads/2018/09/Vienna-Guidelines-Armenian.pdf>
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)



Այս հատվածում ներկայացված են դասի նյութին առնչվող առանցքային եզրույթները և դրանց բացատրությունները: Դրանք Ձեզ կօգնեն դասի նյութն ավելի հեշտ ընկալել: Եզրույթների բովանդակությունն ուշադրությամբ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է մոտ 10 րոպե:

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿԵԼ — Դատարանի որոշմամբ անձին փակ հաստատությունում տեղավորելը, պահելը, հաստատությունը՝ առանց իրավասու մարմնի թույլտվության լքելն արգելելն է:

ԵՐԵԽԱՅԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՇԱՀ — Երեխայի իրավունքների երաշխավորման սկզբունք է, որի առանցքում նրա բարեկեցության ապահովումն է՝ նպատակ հետապնդելով առավելագույնս երաշխավորել երեխայի անվտանգությունը, ինչպես նաև նրա առաջնահերթ կարիքների բավարարումն ու խնամքը: Երեխայի լավագույն շահը որոշվում է յուրաքանչյուր կոնկրետ դեպքով, հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ երեխայի տարիքը, նրա հասունության մակարդակը, մտավոր և ֆիզիկական կարիքները, այդ կարիքների բավարարման համար համապատասխան խնամքի հնարավորությունը, ծնողների ներկայությունը կամ բացակայությունը, նրանց հետ հուզական կապը, երեխայի զարգացման համար ծնողի/ների, ընտանիքի անդամների հետ անվտանգ պայմաններում շփվելու կարևորությունը, երեխայի սոցիալական շփումը (դպրոց, ընկերներ, մասնակցություն մշակութային կյանքին, սոցիալ մշակութային խմբակներին և այլն), ինչպես նաև երեխայի մշակութային, լեզվական, հոգևոր, կրոնական կապերը:

ԵՐԵԽԱՅԱՄԵՏ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ — Արդարադատության իրականացման մոտեցում է՝ հիմնված երեխայի տարիքային առանձնահատկությունները և կարիքները հաշվի առնելու և ըստ այդմ՝ համաչափ արձագանքելու, յուրաքանչյուր երեխայի հանդեպ անհատական մոտեցում ցուցաբերելու, երեխային պիտակավոր

րումից (ստիգմատիզացիայից) զերծ պահելու սկզբունքների վրա: Երեխայամետ արդարադատությանը բնորոշ հատկանիշներ են՝ երեխայի տարիքով պայմանավորված առանձնահատկություններին հարմարեցված լինելը, երեխայի կարիքներին առաջնահերթություն տալը, երեխայի համար մատչելի, հասանելի լինելը, գործերի արագ քննությունը, այս կամ այն որոշման՝ երեխայի համար հնարավոր բացասական հետևանքները կանխատեսելը, երեխայի իրավունքները, այդ թվում՝ գործի քննությանը մասնակցելու, լսված լինելու, սեփական դիրքորոշումները, ցանկություններն արտահայտելու, անձնական և ընտանեկան կյանքի, անձնական անձեռնմխելիության և արժանապատվության իրավունքները երաշխավորելը:

ՓԱԿ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ — Հանրության ազատ ելումուտը սահմանափակող, որոշակի կատեգորիայի անձանց մեկուսացված պայմաններում պահելու համար նախատեսված հաստատություն է, ինչպիսիք են, օրինակ, քրեակատարողական հիմնարկները, մանկատները, գիշերօթիկ դպրոցները, հոգեբուժարանները: